

ՇԻՆ ՊԵՏԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԴԱԴՐԵՅՆԵ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Իսրայելեան «Մաարի» օրաթերթը երէկ լոյս տեսած իր համարին մէջ յայտնեց, որ Իսրայելի ներքին ապահովութեան սպասարկութիւնը՝ «Շին Պէթ», մօտ օրէն պիտի դադարեցնէ երկու տասնամեակ առաջ Լիբանանի մէջ սկսած իր գործունէութիւնը: Այս որոշումը տրուած է իսրայելեան ուժերու Լիբանանէն հեռացումէն ետք, եւ Լիբանանի մէջ տեղեկութիւններ հաւաքելու աշխատանքը յայտնաբերուած պիտի ստանձնէ Իսրայելի վիճակագրական հետախուզական բաժանմունքը: «Մաարի» նաեւ կը գրէր, որ երկար տարիներէ ի վեր իսրայելեան Լիբանանի մէջ գործող Շին Պէթի բազմաթիւ գործակալներ նախապէս տեղադրուած էին այլ վայրերու եւ այլ պաշտօններու մէջ: Անոնք ցարդ գործած էին վերին Գալիլիոյ մէջ գտնուող պանդոկի մը մէջ, եւ անոնք բաժանմունքը շատ գործունէ այլ վայրերու մէջ կը նկատուէր:

ԶՕՐ. ԼԱՏՈՒՏ ՄԵԾ 3ՈՅՍ ԿԸ 3ԱՅՏՆԷ ԶՕՐ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ



Լահուտ կ'ընդունի Զարամը

«Նախագահ գոր. էմիլ Լահուտ մեծ ցաւ յայտնեց Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի մահուան համար, եւ մեծ յոյ՝ պաշտօնը օրերու ընթացքով Պաշտօնը Ասատի ղեկավարութեան նկատմամբ, որովհետեւ ան ժառանգած է իր հօր նկարագրին, բնաւորութեան եւ արժանիքներու կարեւոր մէկ մասը», յայտարարեց խմբագիրներու սենտիքայի նախագահ Մոյճէմ Քարամ: Ան երկէ կայեցեց նախագահ Լահուտի, ցաւակցութիւն յայտնելու համար Սուրիոյ նախագահի մահուան ու Լիբանանի կրած այս մեծ կորուստին համար:

Նախագահ Լահուտ երկէ արձարծեց սուրիական տեղական շահագործողները: Իսրայելի կողմէ բռնագրաւած այդ շրջանը իսրայելեան իշխանութիւնները ընդարձակած էին իրանական հողերէն ներս անցնելով գիւղի բնակարանները: Նախագահը յայտարարեց, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հարցումներուն Լիբանան պատասխանած է, թէ գիւղի բաժանումը անմիջապէս չկատարելու համար եւ մարդասիրական նկատառումներով Լիբանան արգելք չունի այդ գիւղի ամբողջութիւնը ժամանակակից պայմաններու պայմաններու հողատարածքին միացնելու, պայմանաւ որ հաստատուի եւ անփոփոխ մնայ իսկական սահմանագիծը:

Նախագահ Լահուտ նաեւ վերահաստատեց, որ Միջին Արեւելքի տագնապի որեւէ լուծում պէտք է ընդունելի եւ պատուարեք ըլլայ, եւ պէտք է պահպանել արարներու արժանապատուութիւնը: Ան նաեւ յաւատարմութիւն յայտնեց արարական աշխարհի ապագային աւելցուցեց:

Հանրապետութեան նախագահը երկէ ընդունեց այցելութիւնները քանակի ընդհանուր հրամանատար գոր. Միշէլ Միշէմանի, երեսփոխան իսրայէլ Սաապի եւ շէյխ Ուալիտ Ժաֆալի, փաստարաններու սենտիքայի նախագահ Միշէլ Լիանի, Փաղանգաւոր Կուսակցութեան պետ Մուսթաֆա Չաֆի, մշակոյթի եւ ընկերային հարցերու նախարարութեան ընդհանուր տնօրէններ Մոհամէտ Մատիի եւ Նաամաթ Քրնանի եւ դեսպան Մասուտ Մալուֆի:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԶՕՐ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԻ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացնող պատուիրակութիւնը մը երէկ Քրոնտեմայի մէջ ցաւակցական այցելութիւն մը տուաւ գոր. Պաշտօնը Ասատի:

Հ. Յ. Դ. պատուիրակութեան կ'ընկերակցին իսրայէլեան երեսփոխանական պաշտօնը ներկայացուցիչ Սեյուս Յոսեփեան եւ Պուրմ Համուտի քաղաքապետ Անգրանիկ Մալուֆեան:

ԴՈԿՏ. ԿԻՏԱՆԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ

Վիճակագրութիւններու վարչութեան ընդհանուր տնօրէն ղուտ. Մարալ Կիտանեան երկէ կայեցեց նախագահ գոր. էմիլ Լահուտի, Պաշտօնը պաշտօնին մէջ: Դոկտ. Կիտանեան նախագահ Լահուտի ներկայացուց Վիճակագրութիւններու վարչութեան աշխատանքները եւ ապագայ ծրագրերը:

3,8 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ՝ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Նախարարաց խորհուրդը երէկ որոշեց 40 միլիոն տոյար յատկացնել վերաշինութեան եւ Բարգաւաճման խորհուրդին երկրին ենթակառուցիչ նորոգութեան աշխատանքները ամբողջացնելու նպատակով:

Յատկացումը գումարին 3,8 միլիոն տոյարը բաժնի պիտի իյնայ Պուրմ Համուտի քաղաքապետութեան: Գումարը կարելի եղաւ քաղաքապետութեան յատկացնել իսրայէլեան երեսփոխանական պաշտօնը ջանքերուն շնորհիւ:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՏԱՆԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՅԱԹ. ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ 3ԱՌԱՋԻԱՂԱՅՔ ՉԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ՊԱՐԱՔ. ՄԻԱՅՆ ՏԻԱԼՈԿՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԼՈՒԾԵԼ ՎԱՐՅԵՐԸ

Պաղեստինցիներն ու Իսրայել երէկ լուծուած արտաքին խաղաղութեան գործընթացին մասին, այն պահուն, երբ պաղեստինեան իշխանութեան նախագահն ու Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բլինթը կը պատրաստուէին հանդիպում մը ունենալու:

Իսրայելի արտաքին գործոց նախարար Տէյ-վիտ Լէի անհաւանական կը նկատէ, որ պաղեստինցիներուն հետ կարելի ըլլայ խաղաղութեան համաձայնագիր մը ստորագրել: մինչեւ 13 Սեպտեմբեր: Լէի ըսաւ, որ այս հանգրուանին տարակարծութիւնները տակաւին չունենալու պարագային իսրայելցիներուն Իսրայելի միջեւ: Ան անդրադարձաւ, որ կասկածի տակ կ'ստնէ համաձայնագիրը ոչ թէ, որովհետեւ Իսրայել չ'ուզէր պայմանաւորուիլ իսրայելցիներուն ակնկալութիւնները այնքան ցարդ գրաւուած բաժիններէ, որ իսրայելեան որեւէ կատարարութիւն պիտի չ'ընդունի պայմանները:



Արաֆատ տեսակցեցաւ Զիյոնիստի հետ

Լէի յայտնեց նաեւ, որ Ալաբարդանանը պարպելու երրորդ հանգրուանին, Իսրայել կ'ուզէ պաղեստինեան իշխանութեան յանձնել շրջանին ցարդ գրաւուած բաժիններէ, որ իսրայելեան որեւէ կատարարութիւն պիտի չ'ընդունի պայմանները: Ան անդրադարձաւ, որ Ալաբարդանանը պարպելու երրորդ հանգրուանին, Իսրայել կ'ուզէ պաղեստինեան իշխանութեան յանձնել շրջանին ցարդ գրաւուած բաժիններէ, որ իսրայելեան որեւէ կատարարութիւն պիտի չ'ընդունի պայմանները:

ՄՈՍԿՈՒԱ ԶՈՒՐԷ ԿԸ ԶՐԿԷ ՉԵԶԵՆԻՈՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԿՐՈՋՆԻՆ

ՄՈՍԿՈՒԱ, 15 (ՌՈՅԹԸ).- Ռուսիա Հինգ շաբթի օր արգիլած է փոխադրականութիւնը, որ մարտի 13-էն սկսած կ'ընդունէր իսրայելցիները: Սակայն մամուլը արտաստուելն անհրաժեշտ է յարձակումներու ձեռնարկելու քանդուած քաղաքին մէջ:

Ռուսական ուժերը ամիսներ առաջ գրաւած էին մարտադաշտը՝ թունելով ուժերը տեղացնելի ետք անոր վրայ: Սակայն մամուլը արտաստուելն անհրաժեշտ է յարձակումներու ձեռնարկելու քանդուած քաղաքին մէջ թիւով կորուստներ

ԽԱՐԱԶԻ ՍՈՒՐԻԱՅԻՆԵՐՈՒՆ ԻՆՔՆԱԶՄՊՈՒՄԻ ԿՈՋ Կ'ԸՆԷ

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ խարազի ինքնագրով կոչ ուղղեց Սուրիոյ մէջ, ղիտեյ տարով, որ նուազագոյն ջնջումը վստահաւոր կացութիւն մը կ'ընդունէր իսրայելցիները:

Իսրայելի արտաքին գործոց նախարար Տէյ-վիտ Լէի անհրաժեշտ է յարձակումներու ձեռնարկելու քանդուած քաղաքին մէջ:

ՍՈՒՐԻԱ՝ ԶՕՐ. ՄՈՒՍԹԱՅԱՅԻ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ ԶԵՐԱԿԱՎՈՒԹՅԱՆ

ԴԱՄԱՍԿՈՍ, 15 (ՌՈՅԹԸ).- Սուրիոյ իշխանութիւնները ձեռնարկած են երկու անգամ, որոնք հաւանաբար մեղսակցած են բարձրաստիճան գիտնորականի մը սպանութեան, յայտնեցին բարձրաստիճան պաշտօնատարներ Հինգ շաբթի օր:

Սուրիոյ ստիպողական վիճակներու նախարարութեան շրջանային մասնաճիւղի պատասխանատու Ալեքսանտր Ռապտանով, պետական պատկերասփիւռի Ար-Թի-Ար- կայանին յայտնած է, թէ կորցնելի մէջ կացութիւնը յարուած է, «յաւելեալ կրակոցներ կ'արձանագրուին եւ ասիական կայսրուած է այն տուեալին, որ Ապրիլ 17-ին կորցնելի բացուեցաւ անոնց առջեւ, որոնք անհրաժեշտ փաստաթուղթերը ունին», յայտնեց ան:

Չորսուտները յարուած են գիտնորականին նախկին վարորդն ու գրասենեակի մէջ պաշտօնեան են: Զօր. իսրայի Իպրահիմ Մուսթաֆա, որ համայնարանականներու գիտնորական ծառայութեան ու մարզումի բաժանմունքին պետն էր, սպանուած էր ինը օր առաջ իր բնակարանին մէջ: Պաշտօնատարները յայտնեցին, որ երկու ձեռքակալներուն հարցաքննութեան յատկացած է, թէ ոճի-րին նպատակը գողութիւն էր: Ապահովութեան աղբիւրը մը ակնկալեց, որ անոնք խոստովանած են իրենց ոճի-րը եւ յայտնած, որ գողացած են մեծ գումար մը, ատրճանակ մը ու գնդացի մը: Անոնք գողացած են նաեւ գիտնորականին ինքնաշարժը, որ ակնի ու յարած վիճակի մէջ գտնուած էր: Յիշեալ աղբիւրները ակնկալեցին, որ երկու ամբաստանեալները պիտի դատուին գիտնորական ատեանի մը կողմէ, որ գանդակ գնդակահարումի կրնայ դատապարտել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԻ Է ԿՈՎԿԱՄԻ ՄԷՋ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԿԱՅՈՒՆ ՎԻՃԱԿ ՄԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՌԱՆԻԷՐԻ

ԵՐԵՒԱՆ, 15 (ԱՐՄԷՆՓԻՆՏ).- Իտալիոյ արտաքին գործոց փոխ նախարար, Եւրոպական խորհուրդի քաղաքական յանձնարարութիւնի նախագահ Ումպերթո Ռանիէրի Հինգ շաբթի օր Երեւանի մէջ տուած մամուլային ընթացքին կարեւոր նկատեց, որ Հայաստան եւ Ազգայնական միաժամանակ անդամակցին Եւրոպական խորհուրդին:

Ռանիէրիի գլխաւորած պատուիրակութիւնը Թիֆլիս եւ Պաքո աչքեկնէ ետք Երեւան հասաւ քննարկելու համար Եւրոպական խորհուրդին Հայաստանի անդամակցութեան գործընթացին վերաբերող հարցեր: Իտալացի դիւանագետը ըսաւ, որ Եւրոպական խորհուրդը կ'ընդունէ Հայաստանի իշխանութիւններու ջանքերը կազմակերպութեան կողմէ ներկայացուած պատասխանները իրագործելու ուղղութեամբ: «Իր որոգեգրած քայլերով Հայաստան ի վիճակի է կովկասի մէջ ստեղծելու կայուն իրավիճակ մը», ըսաւ Ռանիէրի: Եւրոպական խորհուրդին Հայաստանի անդամակցութեան քննարկման ժամկէտը կ'ընթացան փոփոխ:

Տար. ք. Էջ 10

ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԷՋ

ՆԱԽԱՐԱՐ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ Խ. ՍՈԼԱՆԱՅԻ ՀԵՏ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Պրիքսել այցելութեան շրջագիծին մէջ Զորքարթի օր հանդիպումներ ունեցաւ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու իտալի Սոյանայի եւ Եւրոպական Ցանձնատեղովի արտաքին յարաբերութիւններու ընդհանուր տնօրէնութեան ղեկավար Կի Լեկրայի հետ:

Հանդիպումներուն նախարար Օսկանեան անդրադարձաւ տնօրէնութեան բարգաւաճման ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան մտտեցումներուն: Անոնք անդրադարձան նաեւ Եւրոպական Միութեան կողմէ Հայաստանի տրամադրուող օժանդակութիւնները արդիւնաւէտ կերպով սօցազործելու կարելիութիւններուն: Նախարար Օսկանեան կողմէ Եւրոպական Միութեան՝ աշխուժացնելու շրջանային գործակցութեան ծրագրերը:

Երկէ նախարար Օսկանեան հանդիպում ունեցաւ պեճիքացի իր պաշտօնակից Լուի Միշէլի հետ:

Նախարար Օսկանեան ներկայացուց Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը, շրջանային գարգացումները, մասնաւորաբար՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի խզող լուծման գործընթացին ներկայ փուլը:

Հանդիպումին քննարկուեցան նաեւ երկկողմանի գործակցութեան առաջնուղի հարցեր:

Նախարար Օսկանեան երկէ երեկոյեան Երեւան վերադարձաւ:

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՄԵԿՆԻ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան 19 Յունիսին Մոսկուայի մէջ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան (ԱՊՀ) անդամ երկիրներու պաշտպանութեան նախարարներու խորհուրդի հերթական նիստին մասնակցելու համար 18 Յունիսին Մոսկուա պիտի մեկնի:

Ինթրֆաքս գործակալութեան հետ հարցազրույցի ընթացքին նախարար Սարգսեան ըսաւ, որ հայ-ռուսական պիտուրական գործակցութիւնը կը հիմնուի 28 Օգոստոս 1997-ին կնքուած քարտեզակցութեան, գործակցութեան եւ փոխադարձ օգնութեան մասին համաձայնագրին, իսկ քաղաքականութեան գործակցութիւնը՝ ԱՊՀ հասարակական անվտանգութեան պայմանագրին վրայ: Ան ըսաւ, որ Պրիքսելի մէջ Եւրոպական Միութեան Գործակցութեան խորհուրդի նիստին շրջագիծին մէջ ինքն իր ուս պաշտօնակից Իկոր Սելիկէի համաձայնած են Մոսկուայի մէջ քննարկել իրենց պայմանագրերու ոգիէն եւ դրոյթներէն թիտ կարգ մը հարցեր:

Անդրադառնալով հայ-ռուսական պիտուրական գործակցութեան՝ նախարար Սարգսեան յայտնեց, որ թէեւ այդ գործակցութիւնը կը գտնուի բարձր մակարդակի վրայ, բայց անկախ ընդլայնելու եւ վարգացնելու մեծ ներուժ եւ հեռանկարներ կան, մասնաւորաբար՝ գործակցութեան վարգացման կշռոյթի եւ անոր արդիւնաւէտութիւնը բարձրացնելու համար որդեգրուող քայլերու ուղղութեամբ:

(ԱՐՄԷՆՓԻՆՏ)

400 ՀՈԳԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՑԻՆ ԸՆԿԵՐԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Հայաստանի ներկայ կացութիւնը չափազանց ծանր է, բայց կարող է գտնուել դրանից դուրս գալու ելքը: Այսպէս է գտնում «Առօրինակ» հասարակագիտական կենտրոնի կազմակերպած հարցման մասնակիցների 49%-ը: 26%-ը գտնում է, որ «չնայած կորուստներին, որոշակի հնարաւորութիւններ դեռես պահպանւել են»: 3%-ը գտնում է, որ ձեռք բերուած յաջողութիւնները վստահութիւն են ներշնչում, որ վիճակը կը կայունանայ: 1%-ը վստահ է, որ ամէն ինչ գնում է դեպի լաւը: 11%-ն այն կարծիքին է, որ ձեռքբերումներ եղել են, բայց կորուսել են առանց որեւէ օգուտի, 8%-ը տրամադրուած է լռեռեսուրէն. նրանք համարում են, որ ոչ մի յաջողութիւն չի եղել ու չի լինելու:

Հարցման արդիւնքները լրագրողներին ներկայացրեց կենտրոնի տնօրէն Ահարոն Աղիբեկեանը: Հարցմանը մասնակցել են 400 հոգի՝ Ազգային ժողովի պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, կուսակցութիւնների ղեկավարներ, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, գլոսալական-հասարակագետներ, դասախօսներ, զանգուածային լրատուամիջոցների խմբագիրներ, ձեռներեցիներ, շրջանալին ու մարզային վարչակազմերի ներկայացուցիչներ. բարձրատիւնան զինուորականներ:

Վերջին տարիների ձեռքբերումների շարքում՝ պատասխանողներու 45%-ը նշում է բանակի կայացումը, 30%-ը՝ անկախութեան վերականգնումը, 7%-ը՝ քաղաքացիական հասարակութեան ձեւաւորումը, 5%-ը՝ շուկայական կառավարման ամրապնդումը, 2%-ը՝ Սահմանադրութեան ընդունումը: Իժուռացել է պատասխանել 10%-ը:

Առկայ անյաջողութիւնների պատճառը հարցման ենթարկուածների 62%-ը համարում է բարեփոխումների անցկացման մէջ առկայ բերութիւնները, 39%-ը՝ սեփականութեան ապրիտականացման մեթոտները, 18%-ը՝ դարբանդեան փակուղին, 17%-ը՝ ընտրուած քաղաքական համակարգը, 16%-ը՝ տնտեսական բարեփոխումների ուղղութեամբ, 12%-ը՝ քաղաքական բարեփոխումների ուղղութեամբ, 4%-ը՝ հողի սեփականաշնորհման մեթոտները:

Մասնակիցների 49%-ը գտնում է, որ ներկայ ճգնաժամի յաղթահարման համար անհրաժեշտ է Հայաստանի քաղաքական ուժերի համախմբումը:

Պատասխանողների 45%-ը համարում է, որ ներկայ ճգնաժամը հնարաւոր կը լինի յաղթահարել միայն այն ժամանակ, երբ կը բացայայտուեն նախկինում

բոլոր տրուած անօրինականութիւնները, 39%-ը գտնում է, որ անհրաժեշտ է փոխել քաղաքական կառուցուածքը, 38%-ը հանդէս է գալիս նախագահական նոր ընտրութիւնների անցկացման, 22%-ը՝ տնտեսութեան մէջ պետութեան դերի բարձրացման, 17%-ը՝ բնակչութեան հետ երկխօսութիւն սկսելու, 16%-ը՝ խորհրդարանական նոր ընտրութիւնների օգտին, եւ 15%-ը անհրաժեշտ է համարում փոփոխութիւններ կատարել երկրի Սահմանադրութեան մէջ:

Պատասխանելով այն հարցին, թէ ի՞նչ սպասումներ ունեն ապագայից՝ 59%-ը պատասխանել է, որ աւելի վատ չի լինի, 19%-ը աստիճանաբար լաւանալու յոյսեր է փայտաւորում, 16%-ը վստահում է, որ վիճակը կարող է աւելի վատանալ, 2%-ը համարում է, որ կարծածակետներում ձեռք կը բերուեն դրական արդիւնքներ, եւ 7%-ը դժուարացել է պատասխանել:

Հայ ազգի համար կառավարման միակ արդիւնաւետ մեթոտը՝ դա նախագահի «ուժեղ ձեռքն» է: Այդպիսի կարծիք է յայտնել պատասխանողներու 43%-ը, 28%-ը համարում է, որ «ուժեղ ձեռքն» դեր պէտք է պատկանի վարչապետին, իսկ պատասխանողներու 36%-ը գտնում է, որ նախագահը եւ վարչապետը պէտք է միասին կատարեն այդ դերը:

Մօտ ժամանակներս «ուժեղ ձեռքն» անհրաժեշտութեան մասին ձայները բաժանուել են հետեւեալ ձեւով. 35%-ը կողմ է, որպէսզի այդ դերը կատարի նախագահը, 35%-ը՝ վարչապետը, 35%-ը կողմ է նախագահի եւ վարչապետի համատեղ ջանքերին:

Հարցման ենթարկուածների 15%-ը բոլորովին չի ընդունում նախագահի «ուժեղ ձեռքն» գաղափարը, 18%-ը՝ վարչապետինը, 16%-ը՝ նախագահի ու վարչապետի համատեղ ջանքերը:

Այն հարցին, թէ ի՞նչ քաղաքական ուժ կարող է իր վրայ վերցնել քաղաքական որոշումը եւ ո՞ւմ չէին ցանկանալ տեսնել այդ դերում, ձայները, համապատասխանաբար, բաժանուել են այսպէս. «Դաշնակցութիւն» կուսակցութիւն՝ 6% եւ 3%, «Միասնութիւն»՝ դաշինք՝ 5% եւ 3%, Ազգային - ժողովրդական միութիւն՝ 4% եւ 3%, Հայաստանի Համայնավար կուսակցութիւն՝ 3% եւ 2%, Հայաստանի ժողովրդական կուսակցութիւն՝ 2% եւ 3%, «Իրաւունք եւ Միաբանութիւն»՝ 2% եւ 2%, Աջ ուժերի միութիւն՝ 1% եւ 1%:

«ԳՈՂՈՍ ԱՐՄԵՆԻ»

ՔԻՒՐՏ ՎԻՊԱՍԱՆ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Ուղի սրբի՛ր՝ ճշմարիտ՛ը՝ Հեղինակաւոր թերթի՛ Մայիսի 24ի համարում Պոպ Հիւն անդրադառնում է թուրք-քրտական առնչութիւններին, որից թարգմանաբար քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

«Իմ վկայելում երգիծանք չկայ», ասում է Մեհմէտ Ուզուն անուանով մի քիւրտ վիպասան, որն այժմ ապրում է Սթոքհոլմում եւ իր վրայ է բեւեռել աշխարհի ուշադրութիւնը: Մնուել է 1953ին, թուրքիայի հարաւարեւելեան մասում գտնուող Սեւերեկ քաղաքում: Ճաշակել է իր համաքաղաքացիներին դաժնութիւնները, որոնցով յի են իր գրքերը: 1979ին հրատարակուած մարդիկ սպանել են նորածին դստերը գրկած իր գարմիկին: 1992ին ոճրագործները սպանել են Մուսա Անթերին՝ թուրքերէն-քրտերէն բառարանի հեղինակին, որը նրան գրել է սովորեցրել բանտում. Իր երկու միւս գարմիկներն սպանուել են քրտական վերջին խժողութիւնների ժամանակ:

Ուզունը քրտերէնի լուրջ ուսումնասիրութեամբ սկսել է գրադրում, երբ դեռ 18ամեայ իր պատանի 1971ին Տիարպէփրում ձերբակալուել է թուրքիայից անկախանալու փորձերին պաշտպան կանգնելու մեղադրանքով: Կտտանքներն է ենթարկուել բանտում, որտեղ երկու տասնեակից աւելի համաքաղաքացիներ շարքում են ապստամբուել է եղել, թէ ինչպէս մէկն իր թեւէ վրայից փորձել է վառուած ծխախոտով ջնջել յաջուած «քիւրտ» բառը: Գուցարներով հաւատարմութիւն իշխանութիւններին: Թրքական օրէնքով քրտերէնը՝ գրաւոր, թէ բանաւոր, արգելուած է որպէս լեզու 1920 թուականից: Նրան առուել գայրացրել են նաեւ իրեն տուած յորդորները, թէ աւելի լաւ է հրատարուել իր մտադրացումներից, գրել միայն թուրքերէն եւ այլն: Սակայն ոչխարների առեւտրով գրադրուող հօր պատգամներն անդրդուելին են մնացել, եւ իր վտանգուած մայրենի լեզուի հանդէպ համակ սեր է տածել, որը բազմապատկուել է գաղափարակիցների խորհուրդներով: Երբ ներում է շնորհուել են ազատ արձակուել, քրտերէնով մի յօդուած է ստորագրել՝ աղերսելով փրկել քրտերէն լեզուն մոռացութիւնից:

Յօդուածի հրատարակումից կէս ժամ անց՝ 1976ին, դարձեալ բանտարկուել է:

Բայց մինչեւ դատավարութիւնն ազատ արձակուելու հնարաւորութիւնն օգտագործելով զիմել է փախուստի: Անցել է նախ Սուրիա, ապա Շուէտ, որտեղ որդեգրել է պաշտպարելու ուրոյն ձեւ, մշակել քրտերէնի արդի տարբերակը, հրատարակել նոր բառարան եւ գրել վկայքեր, որոնք պատմում են թուրքերի վայրագութիւններին մասին: Շուէտական կառավարութեան կրթաթոշակներով նա խորացրել է իր գիտելիքները: Այցելել է Իրաքի քրտական համայնք, որտեղ յամբի յոյսի տակ լսել է ծերունի քրտերի պատմութիւնները, գրի առել առասպելները, ուսումնասիրել 16-17րդ դարերի դասական բանաստեղծութիւնները:

Արդիւնքում ծնուել են քիւրտ ժողովրդի պայքարը ներքողող գրքեր, որոնցից առաջինը 1985ին հրատարակուած «Ին» վկայ է, որն հետեւել է «Քիւրտ գրականութեան ժողովածուն» առաջին յրատեսակատեղծ թրքական Հանրապետութեան ղեկավարած քրտուհու սկրիտուականութիւններում:

Ուզունի վկայքը 90ականներին սկսած թարգմանուել են թրքերէն եւ մի շարք եւրոպական լեզուներով:

ԹՈՒՐԵՐԸ ԵՐԿՈՒ ԶԱՐԿ ԱՐԱՆՔՈՒՄ

Թուրքերը երկու քարի արանքում են մնացել: 25 միլիոնի համող քրտերը (Թուրքիայում, Իրաքում, Իրանում եւ Սուրիայում) յայտնուել են համաշխարհային ուշադրութեան կենտրոնում: Ազատական եւրոպացիներն աւելի յաճախ են հետաքրքրուած նրանցով՝ թուրքերին համարելով չարագործները:

Այս նկատուածներով թուրքիան, որն անցեալ տարի ձնել էր քրտական 15ամեայ ազատագրական պայքարի հետեւեալը հանդիսացող ապստամբութիւնը, վերջին շրջանում կանաչ ճանապարհ է բացել քրտական մշակութի առաջ: Սկսել են բացուել քրտական գրախանութիւններ, թարգմանուել գրքեր եւ վաճառուել:

Ուզունի վկայքը ձեւաբան ձեւ է խլում: Այդ բոլորը յաւնու թուրքիայի Եւրոխորհրդի անդամ դառնալու արագացման:

Երբ անցեալ տարի թուրքիայի արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմն ալեքեյեց Շուէտ՝ այդ հարցով այդ երկրի աշխկութիւնն ապահովելու, ցոյց տուեց Ուզունի 3 վկայքի հրատարակութիւնները, եւ Դեկտեմբերին թուրքիան դարձաւ Եւրոխորհրդին անդամակցելու թեկնածու: Այս տարուան Ցունուարին, 23 տարի անց, Ուզունին թոյլատրուեց այցելել ծննդավայր: Աւելի քան երեք հազար մարդ հաւաքուեց Տիարպէփիրի քաղաքապետարանում՝ լսելու նրա նոր «Սերը լույսի պէս, մահը՝ մթնի պէս» գրքից հատուածներն ընթերցումը: Այնուհետեւ մարդիկ երկար հերթ կանգնեցին՝ ստանալու նրա մակագրութիւնը գրքի վրայ, որը պատմում է քրտերի հանդէպ ցուցաբերած թուրք գիտնորականութեան ճնշումներն ու վայրագութիւններին ներքոյ մի քիւրտ ապստամբի եւ քրտուհու միջեւ ծնուած սիրոյ մասին: Գրքի թուրքերէն թարգմանութիւնը դարձել է «պլեբսիլը»:

Սակայն Ֆրանսիայի թուրքական գաւառական մի դատարան լանկարծ արգելեց Ուզունի 7 գրքերի վաճառքն ու տարածումը: Ճիշդ է, այս ամիս ձէմն ու նրա համախոհները չեղեալ համարեցին այդ որոշումը, բայց Շուէտի արտաքին գործոց նախարար Աննա Լինտն արգել է կարգադրել իր ստեղծելու Եւրոխորհրդին թուրքիայի անդամակցութեան դիմումը: Այնպէս որ, վերջին խօսքը թուրքիային է: Եթէ ուզում է մուտք գործել քաղաքակիրթ ազգերի կաճաք, ստիպուած է վերանայել իր քաղաքականութիւնը փոքրամասնութիւնների հանդէպ:

ԵՂԵԼ Է ՓՈՐՁ ԸՈԿՏԵՄԲԵՐԻ 27Ը ԿԱՊԵԼՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՐԵՏ

Շարքարոյց Ն. Յ. Դ. Բիրոյի քաղաքական դիւանի ներկայացուցիչ, Ազգային ժողովի պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործոց յանձնարարական խումբի նախագահ Վահան Յովհաննիսեանի հետ:

ՀԱՌՑՈՒՄ.- Պարոն Յովհաննիսեան, Հոկտեմբերի 27ի նախաքննութեան ընթացքի մէջ կտրուել փոփոխութիւններ արձանագրուեցին. ազատ արձակուեցին Ա. Յարութիւնեանը, որի նկատմամբ գործը կարճուեց, Հ. Յարութիւնեանը, Ն. Բահայեանը եւ Մ. Մովսիսեանը: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է պայմանաւորուած այսպիսի արգաքցումը նախաքննութեան արտակարգ փուլում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այս փոփոխութիւններն անխուսափելի էին:

Երբ 27ի գործի նախաքննութիւնը սկսուեց, սկզբից եւեթ ակնյայտ դարձաւ, որ այդ ճանապարհով գործը տանել հնարաւոր չէ: Որովհետեւ կրքերը, քաղաքական հաշտարկն ու կոյր տեղութիւնը դարձան նախաքննական մարմնի գործունէութեան ուղղորդիչներ:

Ցատկ, այն ժամանակ մեր խորհուրդներին ոչ ոք չէր ուզում ակնաջալոր լինել: Յիշէք, թէ ինչպիսի արձագանքներ եղան, երբ ես եւ մեր յանձնարարական անդամ մի քանի պատգամաւորներ այցելեցինք քննչական մեկուսարան, մեր գործը ընկերքը՝ Մուշեղ Մովսիսեանի, առողջական վիճակին ծանօթանալու նպատակով, քանի որ կային հիմնաւոր կասկածներ, թէ նրա նկատմամբ բռնութիւն է կիրառուած: Մարդիկ այնքան էին քաղաքական հաշտարկներով կարգաւոր, որ հաշտի չնստեցին զոհուածների ընտանիքներին այդ ամբողջ քաջքրտկից հետո պահելու անհրաժեշտութեան հետ, մոյճիսկ նրանց տարբեր կողմ տուեցին ստորագրելու, որոնքում դատապարտուում էր քննչական մեկուսարան այցելելու մեր նախաձեռնութիւնը: Կասկած ունեւ, որ այդ տեղութեան տրամադրութիւնները արմատներ է ունեցել քննչական խմբի մէջ:

Այսօր արդէն անչափ ցանկուն եմ, որ, տրուելով կրքերին, գործը փաստորէն ձեռքից բաց թողնեցին: Հիմա այնու վրա առահ չեմ, որ եթէ մոյճիսկ տեղի ունենայ գործի ամբողջական, իրական բացալայտում, դա կը բաւարարի հասարակութեան սպասումները:

Հ.- Նկատի ունե՞ք կազմակերպիչներին՝ բացայայտման առումով:

Պ.- Ո՛չ: Հասարակութեան տարբեր շերտեր տարբեր կերպ էին մօտենում այդ հարցին: Ունենք կարծում էին, թէ կազմակերպիչներ անկասկած կան, ուրիշներ էլ համարում էին, որ տեղի ունեցածը հէզն Յունանեանի իր յանցակիցների՝ նախաձեռնութիւնն է եւ նրանց հետեւում առնուազան չկայ ստանդարտը որեւէ քաղաքական ուժ կանգնած չէ: Այսինքն՝ հասարակութեան մօտեցումներն ինքնին միանշանակ չէին, բայց իմ ասածը այլ բանի է վերաբերում:

Երբ բոլորի համար ակնյայտ է, որ քննչական խումբը նախաքննութեան ընթացքում կոպիտ սխալներ է թույլ տուել, նրանց ցանկացած՝ անգամ ճիշդ գործողութիւնը, հասարակութիւնն այնուհետ հարցականի տակ է դնելու, միշտ յիշելով նախաքննութեան առաջին ամիսները:

Այնքանք աշխարհում ընդունուած կարգ է, երբ մարդուն ձերբակալում են, իսկ որոշ ժամանակ անց պարզուում է, որ նա անմեղ է, ազատ են արձակուում: Սակայն Հայաստանում դեռ խորհրդային շրջանից արատաւոր փորձ կայ՝ ամէն գնով ապացուցել կայանաւորուած անձի մեղաւորութիւնը, եթէ նա մոյճիսկ իրական անմեղ է: Սա անվստահութեան առաջին պատճառն է: Երկրորդն այն է, որ գործն ուղղուում էր շատ որոշակի քաղաքական թիրախների դէմ:

Հ.- Նկատի ունե՞ք հանրապետութեան նախագահին:

Պ.- Այ՛ո, նախագահի, նրա շրջապատի դէմ: Ակզբնական շրջանում նաեւ որոշ քաղաքական կազմակերպութիւնների:

Հ.- Ո՞ր կուսակցութիւնների:

Պ.- Գրեթէ բոլոր, այդ թում նաեւ՝ Դաշնակցութեան դէմ է մտնում փորձ արելը: Մենք դա գիտեմք:

Հ.- Այն պատճառով, որ Յարութիւն Յարութիւնեանը Կաշնակցական է:

Պ.- Ո՛չ, միջն նրա ձերբակալուելը: Ես ունեմ տեղեկատուութիւն, որ Կաշնակցութիւնը իրեն «մեղաւոր դարձնելու» թեկնածու քննարկուել է այդ շրջանակ

ներում եւ ոչ մէկ անգամ:

Հ.- Իսկ ինչու՞ չհարձրին, ուժե՞րը չպատեց:

Պ.- Ի՛նչ, չէ, ի հարկէ: Պարզապէս ինչքան էլ ճշմարտութեան դէմ մեղանչես, դրան էլ ինչ-որ սահման կայ: Երբ ակնյայտ դարձաւ, որ Կաշնակցութիւնը կայ չունի, այդ թեման մոռացուեց: Փոխարէնը թիրախ դարձաւ նախագահի մտաւայրը:

Հ.- Սակայն Յարութիւն Յարութիւնեանի միջոցով փորձ չի՞ արուել գործը «կապել» Կաշնակցութեան հետ:

Պ.- Ես ինձ երբեք թոյլ չեմ տալ նախկինում կայանաւորուած անձանց հարցը: Եղե՞նք, թէ ոչ: Բայց վստահ եմ, որ արուել է:

Հ.- Նախաքննական մարմնի դիրքորոշումների փոփոխութիւնը, ըստ որոշ կարծիքների, քաղաքական իրավիճակի փոփոխութեամբ է պայմանաւորուած, նկատի ունենալով հանրապետութեան նախագահի դիրքերի ամրապնդումը: Դուք ի՞նչ կարծիք էք՝ նախաքննական մարմինը այս հարցում ենթարկուել է քաղաքական ճնշման:

Պ.- Համաձայն չեմ եւ բացատրեմ ինչու: Նախաքննութեան սկզբում ստեղծուել էր մի քաղաքական շրջանակ, որը կարծես սեփականաշարժող էր երկրի գործում դեկլարացիոն համայնք, զինակից լինելու իրաւունքը եւ ինքն իրեն հռչակել միակ տուժած կողմ: Հասարակութեան միւս մասը՝ նախագահը, քաղաքական կուսակցութիւնները, Ազգային ժողովը, ի վերջոյ, ժողովուրդը դիտուում էին իրեն կասկածաւոր: Եւ որովհետեւ դա շատ կոպիտ, ակնյայտ, բացայայտ արուեց, բնականաբար, տեղի ունեցաւ հասարակութեան եւ քաղաքական ուժերի հակադեմոստրիւն, որը բերեց քաղաքական ընդհանուր իրավիճակի դրամային փոփոխութեան եւ դրա հետեւանքով քննչական խումբի ազատուեց այս շրջանակի ճնշումից, որը պահանջում էր գործը որոշակի ուղղութեամբ տանել:

Եթէ հէզն սկզբից քննչական խմբի աշխատանքն չմիջամտէին, մտաւ իրավիճակ չէր տարանայ: Բայց մի քանի պատգամաւորներ Ազգային ժողովի փոխարէն օրերով մտտում էին Կահիկ Ջհանգիրեանի մօտ՝ խանգարելով նրան իրենց «խորհուրդներով»:

Հ.- Ծառ են նաեւ կարծիքները, որ Յունանեանի եւ նրա խմբի հետեւում դրսից ուժեր կան կանգնած. մասնաւոր ու Եւրոպայում նրանց ապրած տարիները այդպէս էլ մտք մնացին հասարակութեան համար: Ձեր կարծիքն այս առնչութեամբ:

Պ.- Այն տարբերակը հիմա էլ չի կարելի բացատրել: Եւ եթէ դա իսկապէս այդպէս է, ապա Նայիրի Յունանեանին յաջողուել է գործը տանել փակուղի: Ի հարկէ նա, ըստ ամենայնի, օգտուել է իրեն ընդհանրի՛ գործը՝ որոշակի ուղղութեամբ տանելու անթաքնոյց ցանկութիւնից: Այդ ցանկութիւնը հազի թէ անընկալ տարմար: Ձեմ բացառում, որ ամէն լուրջ ուսումնասիրութիւնը կարող է բերել որոշակի բացայայտումների, բայց յոյսը, անկեղծ ասած, շատ փոքր է:

Հ.- Այսինքն՝ զինուորական դատախազութեան հետ այդ իմաստով յոյսեր չէ՞ք կապում:

Պ.- Ջինուորական դատախազութեան հետ երբեք յոյս չեմ կապել: Նախաքննութեան սկզբից էլ գտնում էի, որ գործը նրանց յանձնելը ճիշդ չէ: Անելի՛մ՝ անընդհատ շփուածների մէջ եմ եղել Գ. Ջհանգիրեանի հետ եւ երբ տեսաւ, թէ ինչպիսի է ընթացքը, հրապարակաւ խորհուրդ տուեցի՝ գործն անջատել: Այսինքն՝ կրքերը հանդարտեցնելու համար գործի հետագայում հետախուզուելիք մասնաճիւղերում հանցագործութիւնից, եւ անմիջական մեղաւոր հանդիսացող անձանց դատել: Դատուածներն

ԱՐՈՒԵՍ, ԾԱՂԱԿՆԵՐ ԵՒ ՔԱՆԴԱԿՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ԱՐՈՒԵՍԻ ԵՐԿՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԶԵԼԵՐ՝ ՀՏՊԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՐՈՒՄ ԿԸ ՀԱՆԳԻՊԻՆ ԲԵՄԻՆ ԿՐԱՅ: «ԷՆԹԸՐԹ-ԷՅՆՄԸՆԹ ՈՒՎՅՐ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՅՕԳՈՒՄԾ ՄԸ ԿԸ ՆԵՐԱՅԱՅՆՆԷ ԱՄԵՐԿԱՅԻ ՄԷՋ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՔԱՐՏԱԸ ՕՆՆԻԿԻ ԵՒ ԱՆՈՐ ԶԱՒԿԻՆ ՈԳԻԻ ԿԱԶՄԱԾ ԾԱՂԱԿՆԵՐՈՒՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻՆ ՏԱՐՈՒՆԱԿ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ կը մտածեք երբ կը լսեք «ծաղրածու» բառը. սպիտակ դեմք մը, կարծիր քիթ մը, ծիածանի գոյնով մազեր, մեծ կօշիկներ, կրկնի անասուններ: Ես այլ այդպես կը մտածի, սակայն ձեզի հետ պիտի բաժնեն «ծաղրածու» բառի մէկ այլ բնութագրումը:

Ոգի Գալֆայեան, որ նոր հասկողութեամբ ծաղրածու մըն է, կը բացատրէ. «Կը կրնեք ծաղրածուի ելրոպական ձեւին ազդեցութիւնը, որ տիպարի արեւելումով ստեղծուած է: Այսինքն դիմադրարարումը չէ. որ կը բնորոշէ զայն, այլ տիպարը, որ կը ծնի քեզմէ: Ծաղրածուն մարդկային էութեան ամէնէն անկեղծ բաժննն է. ամէնէն մանկունակ եւ ամենը բաժնիրը»: Մանուկին համար ամէն ինչ հիանալիօրէն պարզ է եւ պարզօրէն բացայայտ: Ոգի կ'ըսէ, թէ շատեր այս պատճառով կը սիրեն ծաղրակները, որովհետեւ անոնք կ'օգտեն հաղորդակից դաճումը իրենց էութեան ներհուճ մանուկին: Այս ձեւի «ծաղրածու - մաղրածուներ» ելոյթ ունեցան անցեալ Մայիսին, Նիւ Եորքի մէջ, ներկայացնելով «Յոր Տի - Սոր Տի» պատմութիւնը:

Քանդակագործ Քարտաշ Օճնիկն է 3 ծաղրածուներ (ՈՐՐ բնորոշումով) պատմութիւն պատմելու նոր եւ խորախորհուրդ ձեւ մը կը մատուցեն: «Յոր Տի - Սոր Տի» ներկայացումը կը հետազօտէ երկու ուղղութեամբ (2 տայմնըզը) գործիքներ, ինչպէս համակարգիչի, պատկերասփիւռի եւ զագայից ալբոմները սահմանափակումները բազմաթիւ ուղղութիւններ (Լայնք, երկայնք, խորք) փոխանցելու մէջ:

Ծաղրածուներ, երկուքը օտար եւ մէկը հայ, բնիկ ամերիկեան եւ եւրոպական ասանդութիւններ կը մարմնավորեն. բեմին վրայ անոնք կ'ուսումնասիրեն Քարտաշի նորագոյն քանդակները, որոնք երեք ուղղութեամբ պատկերներ փոխանցելու սկզբունքին «գործիքներ» են: «Յոր Տի - Սոր Տի»-ն նոր «գործիքներով» նոր առասպել մը ստեղծելով փորձ մըն է եւ նախատիպարներ կ'առնէ լուսարձակի տակ տիեզերական ծիծաղ մը բարձրացնելու համար:

Իսկ ինչ՞ն է «Յոր Տի - Սոր Տի»: Ասիկա կու գայ հայկական ավանդութեան մը, ուր պատմիչը բառի մը անհմաստ գործածութիւնը շեշտելու համար զայն կը կրկնէ, առաջին գիրը փոխարինելով «մ» տառով: Օրինակ, ծաղրածու - մաղրածու, փո-

րագրող - մորագրող, ելոյթ - մեկոյթ եւ այլն:

Սակայն ի՞նչ է «Յոր Տի - Սոր Տի»-ի նիւթը: «Անիկա արուեստը դիտելու ձեւ մըն է. կամ անելի ճիշդ Քարտաշ Օճնիկի արուեստը դիտելու ձեւ մը: Գետնաբար, փոխանակ արուեստի գործի մը նայելու, հանդիսատեւը անոր փորձառութիւնը պիտի ապրի. որովհետեւ այս ձեւով կը կապուին տեսողական եւ կատարողական արուեստները: Արուեստի գործ մը «կը դիտենք», սակայն «կ'ապրինք» ներկայացում մը: Գետնաբար մենք կը ներկայացնենք արուեստի գործ մը, որուն փորձառութիւնը պիտի ապրիք ծաղրածուներու ճամբով, այս ամենը, ազնիւ եւ շատ հաճելի տիպարներուն ընդմէջէն, որոնք կ'օգտեն հանդիսատեսին ապրելու իրենց մատուցած փորձառութիւնը: Ծաղրածուի տիպարին կ'ըսէ հանդիսատեսն է», կը բացատրէ Ոգի Գալֆայեան:

Ծաղրածուներու այս խումբը կը կոչուի «Ըսայլըմ 137»: Ոգի Քարտաշ Օճնիկի գաւակն է: Իսկ Քարտաշ Օճնիկ շնորհալի արուեստագետ, քանդակագործ, պատմութիւն պատմող եւ խաղալիք շինող մըն է: Անոր գործերը կը պատկերեն ոգիին վարակիչ բնոյթը, զոր ան միջոց մը կը նկատ անհատի մը եւ ազգի մը գոյատեւումին: Այս բնաբանը արտացոլացնող անոր ցուցահանդեսները զայն ծանօթ անունի մը վերածած են Ամերիկայի մէջ:

«Քարտաշ Օճնիկ ճշմարիտ արուեստագետ մըն է. որ կը ստեղծագործէ ստեղծագործելու սիրոյն: Կ'ապրի պուրակներու մէջ, կ'ազդուի ամէն ինչէ, սակայն իր ներաշխարհը կը դրսեւորէ քանդակներու ճամբով, փայտին ընդմէջէն: Նոյնիսկ չէի մտածեր իր գործը Նիւ Եորք տանելու եւ վաճառելու մասին: Իրեն արուեստագետ անելի անդին կը մտածէ. չորս ուղղութեամբ գործերու ծնունդ կու տայ: Կ'ապրի կ'ենք մը, որ միայն արուեստ ստեղծելով յառաջ կ'ընթանայ», կը բացատրէ Ոգի:

Իսկ ի՞նչ է «չորրորդ ուղղութիւնը»: «Երեք ուղղութեամբ քանդակ մը հարթ երեւոյթ չ'ունենար. զոյգ աչքերով կարելի է տեսնել անոր համաչափութիւններուն խորութիւնը եւ ֆիզիքական կառուցուածքին ծնունդ տուած արուեստը: Չորրորդ ուղղութիւնը քայլ մը անդին կ'երթայ. բան մըն է, որ անտեսանելի է: Նոյնիցնք զայն չ'տեսնելու մէջ է անոր գոյութիւնը: Քանդակին ֆիզիքական կառուցուածքը, ձեւը, որոշ ազդեցութիւն մը կը գործեն

ակնդիրին զգացումներուն կամ մտածումներուն վրայ. եւ ասիկա կը պատահի զայն դիտելու պահուն, ինչ որ արուեստի գործի մը 3 ուղղութեամբ բնոյթն անդին բան մըն է:

Իսկ այս բոլորը ի՞նչպէս կ'առնուին «Յոր Տի - Սոր Տի»-ի, խորքին մէջ 3 ճաղարանները կը մարմնավորեն քանդակի մը 3 ուղղութիւնները. իսկ չորրորդ ուղղութիւնը անոնց շարժումներն է կը ծնի: Անոր շարժումները 3 ուղղութիւններն անդին կ'երթան եւ մենք կը շարժինք ժամանակի ու միջոցի տարածութեան մէջ: Երաժշտութիւն կը լսենք, թէ եւ ասիկա տեսանելի չէ. բայց կենդանի երաժշտութիւն է. հետեւաբար ներկայ է», կը բացատրէ Ոգի:

«Յոր Տի - մոր Տի» վերնագիրը ինքնին երրորդ ուղղութեան անդին բանի մը կը վերաբերի: «Նաեւ բառախաղ մըն է. թէ եւ չորրորդ ուղղութիւն մը իրականութեան մէջ գոյութիւն չ'ունի, սակայն նոյնիսկ չորրորդ ուղղութեան անելի ուղղութիւններ կ'ընեն գոյութիւն ունենալ: Պարզապէս չենք գիտեր: Գետնաբար «Ս» տարր անկեղծելով ծիծաղի առարկայ կը դարձնենք անգոյ չորրորդ ուղղութիւնը», կ'ըսէ Ոգի:

Քարտաշի համար այս ներկայացումը իր արուեստը ցուցադրելու ձեւն էր. «Սովորաբար շատ դժուարութեամբ կը ցուցադրէ իր գործերը, որովհետեւ իր էութեան մեծ մասը անոնց մէջ է. իր գործածած փայտերուն մէջ, գանոնք ցուցադրելու ձեւ մը կ'որոնէ: Մենք հայելիներ ենք իրեն համար. երեք ուղղութեամբ յատուկ հայելիներ, որոնք կ'օգտեն դիտելու անոր քանդակները: Տեսակ մը գտիչներ ենք: Այս պատճառով ներկայ են ծաղրածուները: Ակնդիրը «չ'ազդարացնող, թէ անոնց միջոցով է. որ կը տեսնէ ցուցադրուած գործերը: Իւրաքանչիւր հանդիսատես տարբեր տպավորութիւններով կը մեկնի տրախէն: Ոմանք կը խնայեն. ուրիշներ հաճոյք կը զգան կամ չ'աչորոյթ, թերեւս նոյնիսկ ցնցում: Շատ բան կախեալ է անոնց հոգեվիճակէն: Արուեստ, ներկայացում եւ երաժշտութիւն կը միածուլուին», կը նկարագրէ Ոգի:

«Յոր Տի - մոր Տի» ներկայացումը նորարարութիւն մըն է: Առաջին անգամ ըլլալով արուեստի երկու տարբեր ձեւեր տապիտութիւնը եւ քանդակագործութիւնը իրարու կը հանդիպին բեմին վրայ:

ՏԱՂԱԿ ԵՒ ՏՈԿՈՒՆՈՒԹԻՆ

ՂԱՏԱԿԱՆԱՐՈՒՄԻ ԱՍՅԱՍ ԿԱՆԾԵՑԱՆ ԿԵՐԱՊԱՍ ԵՒ ՊԱՅՈՒ ԶԱՐԿԵՆ ԵՒ ԹԵՐԱԿԱՆ ԲԱՆԵՒ ԱԸ, ԸՍՆԵԼՈՎ ԸՍՆԱՍՍ, ՈՐ ԻՆՁԻՄԸ ԸՍՍԱՍԱՍ ԵՒ ԻԲԵՒ ԶԱՐԳՈՒՄ ԵՒ ԺՐԱՋԱՆ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒՄ: «ՏԸ ԿԼՈՊ ԷՆՏ ՄԷՅԼ» ԹԵՐԹԻՆ ԹԵՐԱԿԻՑԸ ԿԸ ՊԱՍՍԵ ԱՆՈՐ ՈՐԿԱՍԱՍՆԸ՝ ԸՅՅՈՒ ԲՆՈՐՈՇ ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՆ ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԴՐՈՒՄ ԿՐ. ԱՍՈՐԵՒՄ ԲԱԺԻՆԵՐ

«ԼԵՐԻՆ ԸԼԼԱԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ»

ՁԱՅՆ ԿԸ ԿՈՇԵՑ. «ԱՅՄԱՐԵԻ ԱՄԵՆՆ ՌԵՃԱԳՐԱՆ ԱՐՈՒԵՍԻ ԿԱՃԱՌԱԿԱՆ»: ԼԵՐԻ ԿԱԿՈՍԵԱՆ ԸՍԿԱՅ ՍԸ ԿԸ ՌՈՒԻ ԸԼԼԱԼ ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԱՐՈՒԵՍԻ ԸՈՒԿԱՅԻՆ ՄԷՋ: «ԷՆՈՒԵԻՅԸՆՆ ԵՒԻԶՓԵՅՓԸՐԸ»-Ի ՅՕԳՈՒՄԱԳԻՐԸ ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ (ԱՍՈՐԵՒՄ ԱՍՓՈՎ ԳԻՏԵՐՈՒ ՄԷՋ)

Քալիֆորնիայի հայ մը՝ Լերի Կակոսեան, որ Միննէթրին մէջ հուշակաւոր պատկերասրահի մը սեփականատէրն է, անցեալ Մայիսին մասնաճիւղ մը թացաւ Լոնտոնի մէջ: Ան հակայական ծառայի գեղանկարներ եւ քանդակներ ցուցադրող, ընդարձակ սրահներ գնող եւ արուեստի շուկային տիրապետող վաճառական մըն է: Վերջերս Նիւ Եորքի Չեյսա կեդրոնին մէջ անոր թացած ցուցասրահը բանի մը հարիւր քառ. մեթր տարածութիւն ունի: Բարձրահասակ, մարդկիկ մարմնով կը 50 տարեկանի շուրջ այս այրուր բարեկամութիւններ հաստատած է լրատուական «Մի Նիւհաուս» կեդրոնին պատասխանատուներուն, ծանուցումի հակառակէն՝ ձէյ Ջիսթի, դերասան Սթիւ Մարթինի, «Ռեւոլու»-ի հիմնադիր Ռոն Փերլմանին եւ Ջորջ Սաթթիլի հետ, որ կ'ըսուի, թէ Լոնտոնի պատկերասրահին ծրագիրը իրականացնելուն մէջ մեծ դեր ունեցած է (տարածայնութիւններ կան, թէ ան նւթապէս նպաստած է):

Կակոսեան ճանչցուած է իրիւր «աշխարհի ամենէն ուշագրաւ արուեստի վաճառականը: Ան նաեւ ամենէն համարձակն է: Կարողութիւնը ունի մարդոց համոզելու, որ վաճառքի դնեն իրենց պատկանելի արուեստի գործ մը, որմէ բաժնուելու մասին երբեք պիտի չ'մտածէին, նաեւ՝ միջուկ Ռեւոլուցիոն, որպէսզի գայն զենն անպիտան կ'ընով մը, գործարարներ պատրաստ չ'կեն, որ չ'պատկերասրահներուն ճամբով (երկուքը՝ Նիւ Եորքի եւ մէկը՝ Լոս Անճելէսի մէջ) Կակոսեան կը վաճառէ 20րդ դարու երկրորդ կէսին հուշակալները դարձած արուեստագէտներու, ինչպէ՛ս՝ Էնտի Ուորհոյի, գործերը: Անոր յանդուգն ոգին ներգրաւած է բրիտանացի խնդրաբարոյց արուեստագէտներ, ինչպէ՛ս՝ Տամիրն Հրրսթ եւ Տակոս Կորտն, որոնք իրենց գործերը ցուցադրած են անոր պատկերասրահներուն մէջ:

Հետեւաբար գարմանայի չէ, որ Լոնտոնի արուեստի աշխարհը չի գիտեր, թէ պէտք է «խոնդա՛ր» թէ «յաջ» կակոսեանի նոր պատկերասրահին թացումին առիթով: Լոնտոնի արուեստի շրթադակները «չ'ըրուած» կը գրան, որ ան իրենց քաղաքը իւրական կարեւոր էր ոչ անքան «վաճառատուն» մը թանաղի համար հոն: Ի վերջոյ իրիտանացի երիտասարդ արուեստագէտներու տարրինակ թագմացումը այնքան այ դրական արձագանգ չէ գտած արտասահմանի մէջ:

Յարկ յատուկ չէ Լոնտոնի մէջ Կակոսեանի ծրագիրներուն տարողութիւնը: «Բնակալնաբար շատ ուրախ եմ: Լեթի (նոր արուեստագէտներ եւ յաճախորդներ) պիտի ներգրանգնուեն շուկային մէջ եւ ասիկա միայն հրաշալի բան մը կրնայ ըլլալ», կ'ըսէ Կակոսեանի նոր մասնաճիւղին կից գործուող պատկերասրահի մը սեփականատէր, որ կը յատուկ սպասելի նոր «եռագեռակն»: Ընդհանրապէս երիտասարդ եւ նորագոյն արուեստագէտները քաջախիբող այս պատկերասրահը ուղղակի մրցակցութեան մը վտանգը չի

դիմագրաւեր: Սակայն այլ կեդրոններու համար որոնք անուանի արուեստագէտներու գործերը կը վաճառեն, Կակոսեանի ծրագիրները կրնան ցնցում յառաջացնեն: Այսուհանդերձ անոր Լոնտոնի պատկերասրահին տնօրէնուհին, որ Սոթթիլի Նիւ Եորքի վաճառատան նախկին պատասխանատուներն է, կը խօսի Բրիտանիոյ համար գրեթէ անծանօթ մանրէկացի ժամանակակից արուեստագէտներու գործերը ցուցադրելու մասին:

Կակոսեան արուեստի գործերու առեւտուրի սուր զգացողութիւն մը ունի: Ան իր ասպարէզը սկսած է որմագրներ վաճառելով 1970ական տարիներուն, Սանթա Մոնիթայի մէջ: Ապա պատկերասրահ մը հաստատած է հոն: Թէեւ անոր արուեստի կրթութիւնը առւելաբար հիմնուած է թերթներու մէջ կարդացած յօդուածներուն վրայ, սակայն ան շուտով զարգացուցած է հուշակաւոր ճաշակ մը եւ առեւտուրի յարձակողական ոճ մը՝ հեռաձայնի թիւերու ցանկերը օգտագործելով եւ արուեստի Նաւաթոնները պահողներու հարցնելով, թէ արդեօք պիտի ուզէին ծախել իրենց գանձերէն մէկը: 1988ին Նիւ Եորք հաստատուելով՝ ան առւելագոյն չ'ափով օգտուած է 1980ական տարիներու արուեստի շուկային ծաղկունքին: Կ'ըսուի, թէ Կակոսեան գիտէ աշխարհի մէջ իւրաքանչիւր գեղանկար ուր կը գտնուի, ուր կ'է՛ն՝ եկած է եւ ո'րքան կ'արժէ: Արուեստի մէջ ան ճանչցուած է իր «փլորալիս» մարտավարութեամբ, յաճախորդներու ներկայացնելով ծախու չ'ըրուած գործ մը կամ նախապէս պահողը լած գործեր վաճառելով անկի ազդեցիկ յաճախորդներու:

«Լերի միշտ ծայրագոյնին կը ձգտի: Սակայն թացարձակ հանձնարմըն է առեւտուրի մէջ, որով հետեւ գայն հեռաքրքրական կը դարձնէ: Ոչ ոք կ'աշխատի իրեն պէս», կ'ըսէ հաւաքածոյ պահող մը: Փարթեմ եւ Նոյնիսկ շուայ կենք մը արդող արուեստի այս վաճառականը տեւաբար շրջապատուած է բարեկամներու հարեկամուհիներով: Թէեւ ոմանք գայն կը նկարագրեն իրրեւ ամէկու եւ երբեմն ապիկար անձ մը, սակայն երբ կակոսեան կը ձանձրանայ, իր ինքնութիւնը ու ձայնը ձգտելով կը հեռաձայնի իր պատկերասրահներուն պատասխանատուներուն եւ կատակներ կ'ընէ:

Միայնակ նահանգներու մէջ Կակոսեանի արտառողութիւնները ցնցիչ չեն թուիր: Ան ընդհանրապէս յարգուած է իր գործառնութեանց բարձր մակարդակին եւ թանցարանի որակից ցուցանիչներուն համար: «Լեթիլ մասին բազմաթիւ պատմութիւններ կան: Սակայն անառակելի է անոր սուր քըքը: Ան ծախուած գործ մը դարձնալ վաճառքի հանելու վարպետն է», կ'ըսէ արուեստի վաճառական մը: Իսկ արուեստի քննադատ մը կը բացատրէ. «Ան ամէն ինչ իրեն յատուկ ձեւով կ'իրագործէ, այսինքն՝ անկախ տեսելի, փառատեմէ, ընդլզգեցուցիչ, բայց յանախ՝ բաւական լաւ»:

Վերացապաշտ - արտայայտչապաշտ գեղանկարիչ Արշիլ Կորքիի աղջիկը՝ Մարօ Կորքի վերջերս գեղանկարչկան ցուցահանդէս մը տուաւ Լոնտոնի մէջ: Ան կը նկատուի տարաշխարհիկ արուեստագիտուհի մը եւ բրիտանացի չեն գիտեր, թէ ո'ր պէտք է տեղադրեն զայն: Հետեւաբար ի վերջոյ՝ բրիտանացի արուեստագէտներու շարքին կը դասեն ամերիկահայ տարաբախտ գեղանկարիչին զաւակը:

Մարօ Կորքի ծնած է Նիւ Եորք, ապրած է բազմաթիւ քաղաքներու մէջ, ամուսնացած է անգլիացի գրագէտ եւ արուեստագէտ Մեթիո Սիքնտրիի հետ, այժմ կ'ապրի Իտալիա, Թոսքանայի գիղական հեռաւոր եւ մեկուսացած վայրերէն մէկուն մէջ. վարի բնութեամբ շրջապատուած: Անոր ամուսինը Արշիլ Կորքիի մահուան 50 ամեակին առիթով հրատարակեց իր աներոջ կենսագրութիւնը՝ «Ֆրամ է հայ փլէյս» վերնագրով:

Անոնք, որոնք ծանօթ են Արշիլ Կորքիի արուեստին, հասարակաց տարրեր կը գտնեն հայրու աղջկան գործերուն մէջ: Երկուքն ալ համակուած են հակապական ծաղիկներու պատկերումով, այնքան մեծ, որ դաշտանկարները կը փոքրանան անոնց շուրթին:

Իր առաջին ցուցահանդէսէն սկսեալ Մարօ Կորքի հետզհետէ անելի մօտեցած է բացարձակ վերացապաշտութեան: Կարելի է քսել, թէ ան այս նպատակին հասած է իր հիմնգերող ցուցահանդէսով, որ տեսեց Մայիսի սկիզբէն Յունիս 3: Թէեւ անոր գեղանկարները մեծ մասամբ տակաւին կը տատանուին վերացապաշտութեան սահմաններուն վրայ, թաղելով դաշտանկարներ պատկերելու հիմքեր, սակայն անոնք չեն թաղուիր այնքան խոր, որ պեղելով անկարիցի դասուի: «Մարօ Կորքիի գոյնները հարուստ ու ջերմ են, ինչպէս միշտ: Ան այն հագա՛ւաղէպ արուեստագէտներէն է, որ շատ լաւ գիտէ, թէ ուր կ'ուզէ հասնիլ եւ երկար ժամանակ կը տրամադրէ հոն հասնելու համար», կը գրէ բրիտանական «Տը Թայմզ» թերթը:

Քանատա մուտք գործելու: Սկիզբը մերժուեցաւ, որովհետեւ երկիրը դաշնակա հարկերու կարիք չ'ունէր: Սակայն քանատացի բարեկամները երաշխաւորեցին, իրեն համար գործ մը ճարեցին իբրեւ երգեհոն նուագող՝ Նոպա Սթրօթի գիւղին եկեղեցիին մէջ: Ան Քանատա հասաւ 1996ին:

Կանճեցեան յատկանշական ճարպիկութեամբ մը գործի առիթներ տեսնող է իրեն համար՝ դասաւանդելով մօտակալ համալսարանի մը մէջ եւ պարբերաբար ելոյթներ ունեցնելով շալիֆաքսի մէջ, ուր արժանացած է երաժշտական շրջանակներու յարգանքին:

«Կը կարծեմ, որ ան հրաշալի է: Կը կրէ ուսական դպրոցին բնորոշ յատկանշները, շատ կրակոտ է աշխուժ է», կ'ըսէ պատկերասփիւռի «Սի. Պի. Սի. Հալիֆաքս» կայանին պատասխանատուներէ մէկը, որ արձանագրած է պատկերասփումը եւ Կանճեցեանի համերգները:

«Ինչ որ լսած եմ, գերազանց է: Ան իրապէս կարողութիւնը ունի հակապական եւ ջերմ նուագ մը արտաբերելու դաշնակին ստեղնաշարէն»: Կը նկատարէ «Հալիֆաքս Կրոնիքըլ Հէրալտ»-ի երաժշտական քննադատը՝ Միքլըն Փետրըսըն: Կանճեցեան նաեւ արժանացած է Նոպա Սթրօթի պատկերներու խորհրդին աջակցութեան՝ 4500 տոլար ստանալով Նիւ Եորքի իր համերգին պատրաստութեան համար: Ան հիւրական օգնութիւն ստացած է նաեւ Միացեալ Կահնագներու մէջ հաստատուած Արուեստագէտներու Միջազգային Հիմնադրամէն:

«Ան պատկերը մեր բազմաթիւ արձանիքներ փնտող դատական կազմը: Անոր վարկը ամուր է», կը բացատրէ Նոպա Սթրօթիայի արուեստներու խորհրդին տնօրէնը: Խորհրդը իր պատմութեան մէջ երկրորդ անգամ ըլլալով է, որ նման հատուցում մը կը կատարէ արուեստագէտի մը:

Քանատա հասնելէ չորս տարի ետք Կանճեցեան 5 Յունիսին համերգ մը տուաւ Նիւ Եորքի Քանտոնի շուրջ մէջ, շնորհիւ իր տաղանդին, տղկուութեան եւ բարեկամներ շահելու ու մարդոց վրայ ազդելու կախարդական կարողութեան:

Անոնք զաղթականներ ընդունելու հարցով զբաղող պատասխանատուները ճիշդ էին, երբ կ'ըսէին, թէ Քանատայի մէջ դասական դաշնակահարներու մեծ պահան

ՕՐԱՏԵՏՐ ԸՆՈՒՏԵՍԻԼ

